ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ ~~նոր՝~~ 1.1.-ին մասով.

«1.1. Եթե օրենքով նախատեսված է մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ, ապա այդ գործերով արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վերաբերյալ դիմումների համար սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պետական տուրքը նվազեցվում է արտոնագրված հաշտարարին մինչև երկու ժամ իրականացված հաշտարարության դիմաց վճարած գումարի չափով, բայց ոչ ավելի քան Կառավարության որոշմամբ սահմանված դրույքաչափի և ոչ պակաս քան բազային տուրքի 10-ապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ ~~նոր՝~~ 55.1-ին կետով.

«55.1. արտոնագրված հաշտարարների որակավորման ստուգմանը մասնակցելու համար բազային տուրքի 30-ապատիկի չափով.»:

Հոդված 3. Օրենքի 38-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ~~նոր~~ ա.2-րդ կետով.

«ա.2) պետական տուրքը վճարած կողմին՝ ~~Կառավարության սահմանած չափով որպես փոխհատուցում~~ մինչև երկու ժամ տևողությամբ իրականացված հաշտարարության համար հաշտարարին վճարված վարձատրության դիմաց, բայց ոչ ավելի քան Կառավարության որոշմամբ սահմանված չափով, եթե օրենքով նախատեսված է մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ, կազմվել է հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրություն և հաշտարարության ավարտից հետո նույն անձանց միջև նույն առարկայի մասին և նույն փաստական հիմքերով գործով դատարան ներկայացվել է հայցադիմում և հայցը մերժվել կամ մասնակի է բավարարվել~~է~~:»:

~~**Հոդված 4.** Օրենքի 38.1-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«**Հոդված 38.1. Հաշտարարության արդյունքում հաշտության համաձայնություն կնքելու հիմքով դատարան վճարված պետական տուրքի վերադարձը**~~

~~1. Այն դեպքում, երբ հաշտարարությունը կողմերի համաձայնությամբ կամ միջնորդությամբ նշանակվել է դատարանի կողմից, և կողմերը դատարանի կողմից հաշտարարության համար սահմանված ժամկետում կնքում են հաշտության համաձայնություն, վճարված պետական տուրքը վերադարձվում է պետական տուրք վճարած կողմին հետևյալ չափաբաժիններով.~~

~~1ա) 50 տոկոս, եթե հաշտարարությունը նշանակել է առաջին ատյանի դատարանը.~~

~~2բ) 40 տոկոս, եթե հաշտարարությունը նշանակել է վերաքննիչ ատյանի դատարանը:~~

~~2. Այն դեպքում, երբ հաշտարարությունը նշանակվել է դատարանի նախաձեռնությամբ և արդյունքում կողմերը կնքում են հաշտության համաձայնություն, ապա վճարած պետական տուրքի ընդհանուր գումարի և հաշտարարին վճարված փոխհատուցման չափի տարբերությունը վերադարձվում է պետական տուրք վճարած կողմին հետևյալ չափաբաժիններով.~~

~~1) 50 տոկոս, եթե հաշտարարությունը նշանակել է առաջին ատյանի դատարանը.~~

~~2) 40 տոկոս, եթե հաշտարարությունը նշանակել է վերաքննիչ ատյանի դատարանը:»:~~

Հոդված 4~~5~~. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: